ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գոռ Քոչարյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման և աուդիտի կարգավորման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) 2023 թվականի նոյեմբերի 13-17-ը

3. Հրավիրող կողմը

Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոնի կողմից կազմակերպված՝ Համաշխարհային բանկի, Ավստրիայի և Շվեյցարիայի կառավարությունների կողմից համատեղ մշակված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման (PULSAR) ծրագրի հերթական աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները

- Հանրային հատվածում ֆինանսական հաշվետվությունների համախմբման հետ կապված հայեցակարգային և վիճակագրական մոտեցումները
- Հանրային հատվածում ֆինանսական հաշվետվությունների համախմբման ոլորտում որոշ երկրների փորձը
- Ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգերի դերը ֆինանսական հաշվետվությունների համախմբման գործընթացում

- Կայուն զարգացման հաշվետվողականության արդի զարգացումները և առանձնահատկությունները
- Հանրային հատվածի հաշվապահների կրթական ծրագրերը, դրանց զարգացման ուղղությունները
- ՀՀ-ում և Ուկրաինայում իրականացվող հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի գնահատման պիլոտային ծրագրի ներկա կարգավիճակը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են ծրագրի շահառու երկրներում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտի բարեփոխումների ընթացքը, հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների համախմբման համար անհրաժեշտ քայլերը, մի շարք երկրներում ֆինանսական հաշվետվությունների համախմբման փորձը: Քննարկվել են նաև կայուն զարգացման հաշվետվողականության արդի զարգացումները և խնդիրները, հաշվետվություն ներկայացնող կազմակերպություն-ների շրջանակը:

Ներկայացվել են ՀՀ-ում իրականացված բարեփոխումները, հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման ընթացքում առաջացած խոչընդոտները, դրանց վերացմանն ուղղված քայլերը, առաջիկա անելիքները, ինչպես նաև հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի գնահատման (PULSE) պիլոտային ծրագրի ներկա կարգավիճակը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առկա չեն

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Նոյեմբերի 21, 2023թ.